ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ. ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 , bazum.lori@mta.gov.am

N 016/353
26 նոյեմբեր 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 110-Ա որոշումը:

Առդիր՝ 1 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 110-Ա

06-023-0008-0011 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՆՐԻԿ ՍԱՆԴՐՈՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՍՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հենրիկ Սանդրոյի Գրիգորյանի /ծնված 20.01.1962 թ-ին/ դիմումը, ԱՁ <<Գ. Վեքիլյանի>> կողմից տրված հողամասի և շենք շինությունների հատակագիծը, ղեկավարվելով <<Քաղաքացիական օրենսգրքի >> 188-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ինքնակամ կառուցված, շենքերի և շինությունների 7-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 2005 թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ Լոռու մարզի Բազում համայնքի վարչական տարածքի 06-023-0008-0011 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.04345 հա հողամասի և այդ հողամասի վրա գտնվող այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող , առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1980 թվականին կառուցված 87.92 քմ բնակելի տան, 84.37 քմ բնակելի տան, 35.6 քմ բաց պատշգամբի, 2015 թվականին ինքնակամ կառուցված 10.42 քմ բնակելի տան և 2015 թվականին ինքնակամ կառուցված 3.38 քմ աստիճանահարթակի նկատմամբ վերականգնել և ճանաչել Հենրիկ Գրիգորյանի սեփականության իրավունքը:

2. Հ. Գրիգորյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարները 10.42 քմ մակերեսով ինքնակամ կառուցված բնակելի տան և 3.38 քմ աստիճանահարթակի համար կազմում է 4560 դրամ: Սահմանված վճարը՝4560 ՀՀ դրամ, 30-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե Գ. Բազում 2 փողոց թիվ 19:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ